

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Ծառը

Մեկ ծառ մեկ ձորում էր բիամ եկել:
Մեկ օր սկսեց տրտնջալ, ասել,
Թե ընչի՞ չի ինքն մեկ սարի ծերի
Դուս էկել, որ նրան ամենն էլ տեսնի:
Հենց է՛ս էր ասածն ցերեկ ու գիշեր.
Համը որ տարավ, աստված ի՞նչ աներ:
Նա կուզի աշխարքն միշտ խաղաղ մնա,
Որ չելավ ծառի մուրազն էլ տվեց նա,
Ու նրան ասեց:
«Շա՛տ բարի՝ քո տեղն՝ կասեմ՝ որ փոխեն,
Թո՛ղ սիրտդ հովանա, գանգատ ինձ պետք չեն»:
Իսկույն գետնիցը կրակ դուս էկավ,
Ձորը սար դառավ ծառը բարձրացավ.
Ջանը դինջացավ:
Աչքը սկսեց չորս կողմը քցել,
Իր բախտի վրա քեֆը քոք անիլ:
Ի՞նչ պատահեցավ. էլ ինձ չի հայտնի:
Աստված բարկացավ մեշին բիրադի,
Բոլոր քամուն՝ թունդ տվեց հրաման,
Ինչքան մեշեք կան, անեն քոքրհան:
Կատաղած քամիքն վրա թափեցին,

Սար ու ձոր իրար տվին, ջարդեցին.
Դող ընկավ մեշեն, ճուխկ ասես, տերև
Ջախըփուրթ էլան, լցվեցին մեկ խև:
Ամենն իր սև օրն սկսեց լաց ըլիլ՝
Բայց երկնքիցը քոմակ չէր հասնիլ:
Ճուխկ ու կոխք ջարդված, քոք ու տակ ցրված՝
Միտք արին ծառերն՝ սարի վրա բուսած:
«Երանի՛ նրանց՝ որ ձորի միջին
Ա՜խ՝ դուս են էկել ու էլ դարդ չունին:
Էն սա՛ռն աղբրի, էն հով շվաքի,
Էն կանաչ խոտի, ու սիրուն ծաղկի
Վրեն ու միջումն՝ չորս կողմը բռնած,
Դինջ, անմեղ՝ խնդան արևովն իրանց:
Ո՛չ քամին նրանց ձեռը կխփի,
Ո՛չ արև՝ քոքն ու տերևներն կերի:
Խոսքը դեռ կիսատ: Էնպես թափ տվեց
Քամին՝ որ նրանց քոքըհան արեց:
Ի՛նձ վրա եմ ասում էս պարզ առակը:
Ի՞նչ հարկավոր ա մարդիս՝ թագ, պսակը,
Քանի ցած է տեղդ ու միտքդ հանդարտ,
Էնքան քեզանից հեռու փորձանք, դարդ:
Ա՜խ՝ մի՛ ցանկար, մի՛ հոգվո՛ւյս սիրելի,
Որ բարձր պատվի հասնիս բիրադի:
Պատիվն պատուհասն՝ որդի էն մեկ մոր՝
Փուչ կանեն՝ արևդ ու քո օր: